ԱՐԱՐԱՏՅԱՆ ԴԱՇՏԱՎԱՅՐԻ Մ. Թ. Ա. VIII—VII ԴԴ. ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻՑ ԳՏՆՎԱԾ ԿԱՐԱՍՆԵՐԸ

Հ. Գ. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Արարատյան դաշտավայրում և նրան հարող նախալեռնային շրջաններում պեղվել և ուսումնասիրվել են Վանի թագավորության (Բիայնական) բազմաթիվ ամրոցներ, բնակավայրեր՝ Էրեբունի, Արգիշտիխինիլի, Թեյշեբաինի, Օշական, Արաղած և այլն, որտեղ (մասաններում և առանձին կացարաններում) հսկայական քանակությամբ տալ նյութերի հետ հայտնաբերվել են 1000-ից ավելի ամբողջական և բեկորային ձևով կարասներ։ Այդ անոթները կարևոր նշանակություն ունեն Վանի թագավորության խեցեգործության և տնտեսաձևերի ուսումնասիրության համար։ Այս նյութերի զգալի մասը առանձին հուշարձանների հաշվետվություններում կամ ընդհանուր մենագրություններում հրատարակվել է Բ. Բ. Պիոտրովսկու[1], Հ. Ա. Մարտիրոսյանի[2], Ս. Ա. Եսայանի[3], Ս. Ի. Խոշաշի[4] և այլ մասնագետների կողմից[5]։ Սակայն առայժմ դրանց նվիրված ամբողջական հետազոտություն չի կատարվել։

Ներկայացնենք Արարատյան դաշտավայրի հնավայրերից գտնված նյութը՝ առանձնանալով կարասների ձևաբանական տիպաբանությունը։

Այս անոթները ունեն իրանի տարբեր ձևեր (ուռուցիկ, ձգված, կլորավուն և այլն) և չափեր (0,5 մ—2,3 մ բարձրություն)։ Ըստ կիրառական նշանակության, դրանք բաժանվում են երեք խմբի՝ խոշոր (1,5 մ և բարձր), միջին (0,7—1,5 մ), փոքր (0,5—0,7 մ)[6], որոնցից յուրաքանչյուրն օգտագործվել է տարբեր նպատակների համար։ Որպես տիպը բնորոշող հատկանիշ կարելի է հիմք ընդունել իրանի և ուսի կառուցվածքային ձևերը, իսկ մնացածը՝ վիզ, շուրթ, հատակամերձ հատված՝ որպես առանձին տարբերակներ։ Երեք խմբերին պատկանող կարասները բաժանվում են 5 տիպի[7]։

Առաջին տիպ— Ուռուցիկ իրանով կարասներ, 11 օրինակ. գտնված՝ Կարմիր Բլուրից (աղ. 1, նկ. 1, 9, 10), I խումբ (աղ. 2, նկ. 8, 9), II խումբ, Օշականից (աղ. 1, նկ. 2), I խումբ, Արգիշտիխինիլիից (աղ. 1, նկ. 5, 6), II խումբ (աղ. 2, նկ. 12), III խումբ (աղ.

---

[1] Б. Б. Пиотровский, История и культура Урарту, Ереван, 1944, նույնի՝ Кармир-блур 1, Ереван, 1950, Кармир-блур II, Ереван, 1952, Кармир-блур III, Ереван, 1955, նույնի՝ Ванское царство, М., 1959, նույնի՝ Искусство Урарту, Л., 1962.

[2] А. А. Мартиросян, Город Тейшебаини, Ереван, 1961, նույնի՝ Армения в эпоху бронзы и раннего железа, Ереван, 1964, նույնի՝ Аргиштихиили, Ереван, 1974.

[3] Ս. Ա. Եսայան, Կատալոգ Երևան քաղաքի պատմության թանգարանի հնագիտական իրերի, Երևան, 1964, նույնի՝ Կատալոգ II, Երևան, 1967, Կատալոգ III, Երևան, 1972, նույնի՝ Ереван, археологический очерк, Ереван, 1969, նույնի՝ Կարմիր բլուր Երևան, 1983.

[4] С. И. Ходжаш, Н. С. Труханова, К. Л. Оганесян, Эребуни, М., 1979.

[5] Արևմտյան Հայաստանից և Պարսկահայքից հայտնաբերված նման կարասները դասակարգել է Ս. Կրուլը (տե՛ս „Keramik Urartaischer Festungen in Iran", Berlin, 1976), իսկ Կայալիդերեի նյութերը՝ C. A. Burney, A first season of excavations of the Urartian citadel of Kayalidere („Anatolian Studies", vol. 16, 1966, p. 55—113).

[6] Տիպերի նկարագրության ժամանակ չենք տալիս անոթների բացարձակ չափերը, քանի որ ուղեկցվող աղյուսակներում դրանք ներկայացված են համապատասխան մասշտաբներով։

[7] Կրկնությունից խուսափելու համար կարասների խմբերը նշում ենք լատինական թվերով։ Քննվող տիպերում հանդիպող տարբերակների կարասներից մի քանի օրինակներ իրենց մի հատկանիշով կրկնում են նույն և մյուս տիպերի տարբերակների անոթները, իսկ մյուսով որոշակիորեն տարբերվում են միմյանցից։

2, նկ. 1, 3), III խումբ։ Այս տիպի մեջ ընդգրկված անոթները ստորաբաժանվում են երեք տարբերակների։

1. Կարասներ, որոնք ունեն կարճ վիզ՝ զանգվածեղ ուղիղ դրված, հարթ կտրված շուրթ (աղ. 1, նկ. 1, 2, 5, 6, 9, 10), սահուն դեպի անոթի հատակը նեղացող հատակամերձ հատված[8]։



2. Նույնատիպ կարասներ, շուրթը՝ կլորացող, դեպի դուրս ճկված (աղ. 2, նկ. 8, 9, 12, աղ. 3, նկ. 1, 3)։

3. Բարձր վզով կարասներ՝ զանգվածեղ հարթ շուրթով (աղ. 1, նկ. 6)։

Երկրորդ տիպ— Ձգված իրանով կարասներ, 19 օրինակ, հայտնի՝ Կարմիր բլուրից (աղ. 1, նկ. 3, 7), I խումբ (աղ. 2, նկ. 2—4, 7), II խումբ, Էրեբունիից (աղ. 1, նկ. 4), I խումբ (աղ. 2, նկ. 1), II խումբ, Օշականից (աղ. 1, նկ. 8), I խումբ, Արգիշտիխինիլիից (աղ. 2,

8 Բիայնական բոլոր կարասներն ունեն հարթ հատակ, և նրանց քննությունը որպես առանձին տարբերակ, անիմաստ է։

նկ. 6, 11, 13—16), II խումբ (աղ. 3, նկ. 2, 4, 5, 10), III խումբ, որոնք ստորաբաժանվում են չորս տարբերակների։



1. Կարճ վզով, ուղիղ դրված հարթ շուրթով, սահուն նեղացող հատակամերձ հատվածով անոթներ (աղ. 1, նկ. 4, 7, 8, աղ. 2, նկ. 5)։ Այս տարբերակը մոտենում է առաջին տիպի մեջ ընդգրկված կարասների առաջին տարբերակին։

2. Նույնատիպ կարասներ, որոնց շուրթը ի տարբերություն առաջինի կլորացող է, քիչ դուրս ճկված (աղ. 2, նկ. 2—4, 6, 7, 11—16, աղ. 3, նկ. 2, 4, 10), շուրթը կրկնում է առաջին տիպի երկրորդ տարբերակի անոթների ձևերը։



3. Երկար վզով, կլորացող, դուրս ճկված կամ հարթ կտրված շուրթով կարասներ (աղ. 2, նկ. 1, աղ. 1, նկ. 3)։ Շուրթի կառուցվածքով նման են երկրորդ և առաջին տարբերակի կարասներիս, իսկ վզի բարձրությամբ նույնանում են առաջին տիպի երրորդ տարբերակի հետ։

4. Կարմիր բլուրից հայտնաբերված կարասը (աղ. 1, նկ. 3) ունի կտրուկ նեղացող հատակամերձ հատված։

Երրորդ տիպ— Գնդաձև իրանով կարասներ։ 4 օրինակ, հայտնաբերվել են Կարմիր բլուրից (աղ. 2, նկ. 5, 10), II խումբ (աղ. 3, նկ. 8, 11), III խումբ, ունեն բավականին կարճ վիզ, բերանի նեղ բացվածք, կլորավուն դեպի դուրս ճկված շուրթ, հարթ փոքրիկ հատակ։ Շուրթի կառուցվածքով կրկնում են առաջին և Երկրորդ տիպերի երկրորդ տարբերակների անոթները։

Չորրորդ տիպ— Ներկայացված է մեկ անոթով, Կարմիր բլուրից, ունի կլորավուն իրան, կտրուկ լայնացող, փողալայնուկ բարձր վիզ, կլորացող, դուրս ճկված շուրթ, բերանի լայն բացվածք, հարթ հատակ (աղ. 3, նկ. 9), III խումբ։

Հինգերորդ տիպ— Կարաս՝ գտնված Արդիշտիխինիլիից։ Կարճ իրան, երկարավուն, վերին մասում լայնացող վիզ, կլորացող դուրս ճկված շուրթ, հարթ, լայն հատակ (աղ. 3, նկ. 7), III խումբ։ Զարդամոտիվները բավականին հարուստ են և բազմազան։

Խոշոր (I խմբի) կարասների զարդամոտիվների դասակարգումը կատարվել է ելնելով տարբեր խորադիր տարրերի հաշորդականությունից և դիրքից՝ առանձնացնելով հետևյալ տարրերը. միաշարք, խորադիր, եռանկյունաձև նախշազարդ, կլորացող գագաթներով, ուղղված դեպի վեր (Էրեբունի, աղ. 1, նկ. 4, Կարմիր բլուր, աղ. 1, նկ. 10, Արագած), նմանատիպ երկշարք, եռանկյունաձև նախշազարդ կլորացող անկյուններով՝ ուղղված վեր (Կարմիր բլուր, աղ. 1, նկ. 7, Օշական, աղ. 1, նկ. 2), երկշարք, եռանկյունաձև նախշազարդ, սրածայր գագաթներով ուղղված դեպի վեր (Կարմիր բլուր, աղ. 1, նկ. 1, 7)։ Հորիզոնական դասավորված, երկշարք ուղղանկյան տեսքով նախշազարդ, ներքևից ավարտվող միաշարք եռանկյունիներ՝ սուր գագաթներով ուղղված դեպի անոթի հատակը (Արդիշտիխինիլի, աղ. 1, նկ. 11), նույնատիպ եռաշարք, ուղղանկյան տեսքով, վերևից ավարտվող միաշարք եռանկյունիներով, կլորացող գագաթներով՝ ուղղված դեպի վեր (Կարմիր բլուր, աղ. 1, նկ. 3)։

Բացի վերոհիշյալից այս խոշոր կարասների զարդամոտիվների համակարգում, որպես կանոն, հանդիպում են միաշարք, երկշարք ուռուցիկ, ներճկված, երկրաչափական և բուսական էլեմենտներ, որոնք հիմնականում տեղադրված են շուրթի տակ և իրանի վրա։ Դրանք հարդարված են թեք գծերով, սերմանախշով, ժապավենաձև, ալիքանախշ։ Նման հորինվածքով զարդարված կարասներ հայտնի են Կարմիր բլուրից, Էրեբունիից, Արդիշտիխինիլիից, Օշականից[9], Արագածից (աղ. 1, նկ. 1—10)։

Կարասների երկրորդ խումբը հիմնականում զուրկ է հարուստ զարդամոտիվներից, չնայած մի քանիսի վրա հանդիպում են առանձին նախշազարդ տարրեր։ Այսպես՝ Արին բերդից տնված կարասներից մեկը վզի տակ ունի երեք ուռելիեֆ գծեր՝ երկուսը զարդարված օղակաձև կետային նախշերով, իսկ մնացածը իրենց վրա ունեն սեպաձև նշաններ (աղ. 2, նկ. 1)։ Հետաքրքիր են Կարմիր բլուրից հայտնաբերված ոն փայլեցված անոթները, որոնցից առաջինը իրանին ունի երեք հավասարաչափ իրարից հեռացող զուգահեռ ուռելիեֆ գոտի (աղ. 2, նկ. 10), իսկ երկրորդը՝ նույնատիպ չորս գոտի (աղ. 2, նկ. 5), ընդ որում վերջինիս վզի տակ արված է դալարվող օձի ծեփաքանդակ։ Նման կարասի բեկորներ պահվում են Վանի թանգարանում[10]։

Երրորդ խմբի անոթների դգալի մասը զարդանախշ չունի, չնայած առանձին կարասներ աչքի են ընկնում հարուստ հարդարումով։ Այստեղ առանձնանում է Կարմիր բլուրի № 16 սենյակից հայտնաբերված անոթը[11] (աղ. 3, նկ. 9)։ Իրանի վերին մասում կա 3 ցլագլուխ ծեփաքանդակ, որոնք ձևավորված են բավականին նուրբ դիմային մանրամասներով՝ փոքրիկ դունչ, կլորավուն աչքեր, սրացող եղջյուրներ։ Կարասի ուսի ուռուցիկ գոտին ներկված է սև, շագանակագույն, դեղնավուն օղակներով, որոնք միմյանցից անշատված են զույգ ուղղահայաց գծիկներով։ Այսպիսի ցլագլուխ քանդակազարդ անոթներ հայտնաբերվել են Երևանի բիայնական դամբարանից, ինչպես նաև՝ Արևմտյան Հայաստանի հնավայրերից՝ Ալթըն-թեփե, Արծկե, որոնցից մի քանի նմուշներ՝ պահվում են Վանի թանգարանում[12]։

---

[9] С. А. Есаян, Об урартских дворцовых комплексах Ошакана (Культурное наследие Востока, Л., 1985, с. 112—113).

[10] T. C. Kültür ve Turizm Bakanlig'I Anadolu Medeniyetleri, Istanbul, 1983, sah. 289, A-777.

[11] Б. Б. Пиотровский, Кармир-блур 1, с. 56, 70, рис. 43.

[12] „T. C. Kültür . . .", sah. 289, A-776, 777.

Կենդանիների քանդակազարդ պատկերներ հանդիպում են նաև մետաղական առարկաների վրա, ինչպիսին է օրինակ Վանի շրջանից գտնված բրոնզե կացինը։ Բիայնական կարասները, որոնք զարդարված են ծեփաքանդակ պատկերներով, իրենց բովանդակությամբ շատ մոտ են ավելի վաղ ժամանակաշրջանի խեթական ոճին բնորոշ օրինակներին՝ հայտնաբերված Բողազքյոյից, Ալիշարից[13], Այս խմբի մեջ ընդգրկված անոթներից ալքի են ընկնում Թեյշեբաինի պեղումներից գտնված 2 գնդաձև կարասներ, որոնք ունեն սև փայլեցված մակերես։ Առաշինի (աղ. 3, նկ. 8) իրանի կենտրոնով անցնող ուռուցիկ հորիզոնական լայն գոտին անոթը բաժանում է երկու մասի։ Մյուսն ունի ավելի հարուստ հարդարանք (աղ. 3, նկ. 11)։ Անոթի վերնամասը զարդարում են 12 եռանկյունիներ՝ սուր ծայրերով ուղղված ներքև, որոնց մեջ լցված է կարճ կետագծերով արված ալիքանախշ։ Դրանք սուր ծայրերով հպվում են կարասի կենտրոնամասով անցնող նուրբ ուռուցիկ հորիզոնական գոտուն։ Նման երկշարք եռանկյունիներ՝ սուր ծայրերով ուղղված վերև, զարդարում են Արգիշտիխինիլիից գտնված անոթի իրանը (աղ. 3, նկ. 7)։ Ի տարբերություն Կարմիր բլուրից հայտնաբերված օրինակի, այս եռանկյունիները լցված են փոքր սեպերով, իսկ անոթն ունի բալագույն անգոբապատ մակերես։ Արգիշտիխինիլիից գտնված մեկ այլ անոթի[14] վերին մասում կա կրկնակի դաշվածք, որի վրա նշմարելի է թռչունի և օձի պայքարի պատկեր՝ շրջապատված բուսական ալիքանախշով (աղ. 3, նկ. 6)։

Արարատյան դաշտավայրի հուշարձաններից հայտնաբերված բիայնական կարասների զարդամոտիվները չեն սահմանափակվում վերոհիշյալով։ Բազմաքանակ բեկորներ իրենց վրա կրում են ամենատարբեր բովանդակությամբ պատկերներ, որոնց մի մասն արված է թրծումից հետո։ Դրանցից կարելի է առանձնացնել Արգիշտիխինիլիից գտնվածը, որի վրա գծագրված է լացող մարտակառք՝ իր մանրամասներով[15]։ Նման պատկերներ կան Արծկեի (Ադիլշևազի) պեղումներից հայտնաբերված բարձրաքանդակներում[16]։ Պարզունակ կենդանակերպ զարդանախշով կարասների բեկորներ են գտնվել Էրեբունիի պեղումներից[17]։ Դրանցից մեկի վրա խաչագծված է վազող ձի՝ ձգված իրանով, փարթամ պոչով[18], նման՝ Արգիշտիխինիլիի օրինակին։ Մյուս անոթների վրա արված են թռիչքի պատրաստված քարայծի[19], երկսապատ ուղտի, թռչունի պատկերներ։ Այդ հավաքածուի մեջ առանձնանում է խոշոր կարասի մի բեկոր[20], որի վրա խաղաղված է ճտքավոր կոշիկ։ Կարմիր բլուրից[21], Վանի թագավորության կենտրոնական և հարավային շրջաններից՝ Հասանլու Զիվիե[22], գտնվել են կոշիկաձև անոթներ, որոնց մի մասը պահվում է Թեհրանի թանգարանում։ Էրեբունիի խալդի տաճարի որմնանկարի բեկորներից մեկի վրա պատկերված է մարտիկների ռազմերթը[23], որտեղ առանձնանում է ճտքավոր կոշիկ հագած զինվորը՝ իր զենք ու զրահով։ Նմանատիպ անոթներն ունեցել են տարածքային և ժամանակագրական լայն սահմաններ՝ տարբեր հուշարձաններից (Լճաշեն, Դավիթ Բեկ, Լցեն, Նախիջևան և այլն)[24]։

Վանի թագավորության շինարարական, կառուցողական արհեստի, շենքերի, ճարտարապետական ձևերի, հատակագծերի վերաբերյալ կարևոր աղբյուր են նաև կիրառական արվեստի

---

13 Б. Б. Пиотровский, История и культура Урарту, с. 242—243.

14 А. А. Мартиросян, Печати мастеров на сосудах из Аргиштихинили (Древний Восток и мировая культура, М., 1981, с. 80, рис. 60).

15 А. А. Мартиросян, Аргиштихинили, с. 100, рис. 36 (б).

16 B. Öğün, Excevations at Kef Kalese of Adilcevaz („Anadolu) Anatolia („IX, Ankara, 1965, d. 13—28, mat. XIX).

17 Մ. Իսրայելյան, Էրեբունի բերդ-ամրոցի պատմությունը, Երևան, 1971, էջ 72, А. А. Демянская, Кладовые Эребуни, М., 1968, с. 187, рис. 5.

18 Մ. Իսրայելյան, նշվ. աշխ., էջ 73։

19 С. Гущев, Крыша над древним городом («Техника молодежи», 1967, № 11, с. 29).

20 Инвентарный фонд музея Эребуни 23/21.

21 Б. Б. Пиотровский, Кармир-блур (альбом), Л., 1970, рис. 69, 70.

22 G. Azarpay, The Urartian boot-shoped vessels („Artibus Asiase"), N. York 1964, vol. 27, №1/2, p. 61—71, ill. 3,4).

23 Կ. Լ. Հովհաննիսյան, Էրեբունիի որմնանկարները, Երևան 1973, նկ. 50։

24 С. А. Есаян, Древняя культура племен северо-восточной Армении, Ереван, 1976, с. 204.

բազմաթիվ գտածոներ։ Այսպես՝ էրեբունիից գտնված կարասի մի բեկորի վրա խազագծված է ուղղանկյուն շենք[25], որն ունի աշտարակներ, բարձր մուտք։ Նման պատկերներ կան նաև մետաղե տարբեր առարկաների վրա, ինչպես օրինակ Թուրակ-կալեից հայտնաբերված բրոնզե թիթեղը[26]։

Քննվող կարասները ունեցել են բազմաբնույթ կիրառական նշանակություն, ընդ որում տարբեր խմբերի առանձին օրինակներ կարող էին կատարել միևնույն ֆունկցիան։ Խոշոր կարասները տնտեսական լայն կիրառություն են ունեցել՝ հիմնականում օգտագործվելով գինի, հացահատիկ, բուսական յուղ պահելու համար։ Ամբարները, ինչպես և մառաններում պահվող կարասները, խիստ հսկողության տակ էին։ Դրանք պարտադիր կնքվում էին։ Կարասների տարողությունները շատ անգամ վերստուգվում, վերահաշվառվում էին։ Դրանց վրա դրվում էր նոր չափի միավոր՝ համառոտագրերով կամ էլ ամբողջական բառերով[27]։ Հայտնի է, որ բիայնական պետությունում գոյություն ուներ չափի միավոր՝ ակարկին և տերուսին (240—250 լ, 20—25 կգ[28]։ Շտեմարան-մառաններում պահվող մթերքը ծառայում էր ոչ միայն ամրոցի բնակիչների, ներքին և արտաքին առևտրի, այլև բանակի, կայազորի համար։

Միաժամանակ Կարմիր բլուրի «հարուստ ուրարտացու» բնակարանի պեղումները ապացուցում են, որ այդ կարասները ծառայել են ինքնուրույն տնտեսություն ունեցող վերնախավի կարիքները բավարարելու համար։ Այս անոթները օգտագործվել են նաև երկրագործական և անասնապահական մթերքների վերամշակման աշխատանքներում։

Կարմիր բլուրի միշնաբերդի երկրորդ հարկում գտնվել է առանց տանիքի մի այլ մեծ մառան (սենյակ № 50), որը ըստ Լ. Մ. Ջանփոլադյանի կառուցվել է միշնաբերդի բարձրադիր, արևից լավ տաքացվող և փոշուց պահպանված վայրում, գինեգործության համար[29]։ Հայտնաբերվել է նաև խոշոր արհեստանոց-ձիթհան՝ քունջութի ձեթ ստանալու համար, որի հատիկները գտնվել են սենյակներում պահվող կարասների մեջ[30]։

Երկրագործական մթերքների վերամշակումը Թեյշեբաինիում չի սահմանափակվում նշվածով։ Այստեղ գարեջուր պատրաստելու արհեստանոցներում հայտնաբերվել են բազմաթիվ անոթներ, քարե տաշտեր՝ պատրաստի արտադրանքի, գարու և կորեկի համար[31]։ Երկրագործականի հետ մեկտեղ այստեղ վերամշակվել են նաև անասնապահական մթերքների տարբեր տեսակներ։ Հետաքրքիր են պանրագործական արհեստանոցի պեղումները[32], ուր գտնվել են միջին չափի մի քանի տասնյակ կարասներ։ Դա վկայում է պետական խոշոր տնտեսության առկայության մասին։ Այդ անոթների մի մասը ծառայել է որպես թաղման կարասներ, որոնք աճյունասափորների նման ունեն անցքեր՝ արված անոթի թրծումից հետո։ Մասնավորապես այդպիսի կարասներ հայտնաբերվել են Արգիշտիխինիլիի[33] պեղումներից, որոնք նույնությամբ Լոկնում են մառաններում և կացարաններում հայտնաբերվածներին։

Բիայնական խոշոր ու միջին կարասների մի զգալի մասը ի տարբերություն մյուսների, պատրաստվել է ձեռքի և դուրգի միջոցով, փոքրերը՝ միայն դուրգի։ Սակայն այս խմբի մեջ հանդիպում են առանձին օրինակներ, որոնք պատրաստվել են ձեռքի միջոցով։ Այդ եղանակների մասին հետաքրքիր հաշվարկներ է կատարել Լ. Ն. Բիյագովը[34], ըստ որի Հայաստանի խեցեգործական արտադրության մեջ, սկսած բրոնզեդարյան ժամանակաշրջանից, դուրգով պատրաստված անոթների քանակը հասնում է 70 %-ի, մնացածը կատարվել է ձեռքով։ Այս տեսակետը կարելի է տարածել նաև Վանի թագավորության խեցանոթների վրա, որոնց դու-

---

25 С. И. Ходжаш, Эребуни, с. 70.

26 Б. Б. Пиотровский, Ванское царство, с. 204, рис. 57, նույնի՝ Искусство Урарту, рис. 56.

27 Մ. Ա. Իսրայելյան, նշվ. աշխ., էջ 82։

28 Р. О. Варданян, Д. Г. Асатрян, Некоторые замечания по метрологии Урарту («Պատմա-բանասիրական հանդես», 1980, № 2, էջ 172—173)։

29 Б. Б. Пиотровский, Ванское царство, с. 146—147.

30 Նույն տեղում, էջ 137։

31 Նույն տեղում, էջ 147։

32 Ս. Ա. Եսայան, Կատալոգ III, էջ 19—20.

33 А. А. Мартиросян, Аргиштихинили, с. 50—52.

34 Л. Н. Биягов, Материальная культура долины реки Мармарик (эпохи поздней бронзы—раннего железа), автореферат канд. дис., Ереван, 1986, с. 16.

գահլեները գտնվել են Կարմիր բլուրում։ Ինչպես նշում է Բ. Պիոտրովսկին[35], այստեղի խեցանոթների մեջ հանդիպում են շատ մեծ քանակությամբ բարձրորակ անոթներ՝ պատրաստված դուրգի վրա և համեմատաբար սակավաթիվ օրինակներ՝ արված ձեռքով, որոնք պատկանում են նույն ժամանակաշրջանին։

Այսպիսով՝ Արարատյան դաշտավայրի հնավայրերից, ամրոց-բնակավայրերից հայտնաբերված Վանի թագավորության ժամանակաշրջանին պատկանող կարասների ուսումնասիրությունը հնարավորություն է ընձեռում այս անոթների երեք խմբերում առանձնացնելու ձևաբանական հինգ տիպ։ Անոթներից, մասնավորապես առաջին խմբին պատկանողները, իրենց ձևերով, որքան մեզ հայտնի է, ամենավաղ օրինակներն են Հայաստանում։ Ինչ վերաբերում է միջին և փոքր կարասներին, ապա դրանք Հայաստանում գտնվել են դեռևս մ. թ. ա. III հազարամյակով թվագրվող բաղմաթիվ հուշարձաններում։

Բոլոր բնվող կարասներն ունեն ձևական ընդհանուր հատկանիշներ, սկսած շուրթից մինչև հատակը՝ պատրաստումից մինչև անգործադրում, թրծում՝ և օգտագործում։ Այս ամենը չի խանգարում մատնանշել այն կոնկրետ հատկանիշները, որոնցով կարասները տարբերում են միմյանցից։ Դա առաջին հերթին անոթների իրանների կառուցվածքին է վերաբերում՝ ձգված, ուռուցիկ, գնդաձև, ապա՝ շուրթերի տարբեր չափերին ու ձևերին՝ ուղիղ, հարթ, կտրած, կլորացող զուրս ճկված և այլն։ Նկատվող երևույթը, կարելի է բացատրել առանձին վարպետների, ինչպես և՝ միևնույն կենտրոնների տարբեր արհեստանոցների գոյությամբ, որի մասին վկայում են խոշոր կարասների վրա պահպանված վարպետների նշանները։ Այդ նշանները հանդիպում են նաև այլ խմբերի կավանոթների վրա (քրեղաններ, թասեր, սափորներ և այլն)։ Դա ապացուցում է միևնույն արհեստանոցի և կավագործական տարբեր կենտրոնների՝ բազմաղան խեցանոթներ արտադրելու հնարավորությունների մասին։ Այսպես՝ վարպետների նշանագրերը՝ ղտնված Կարմիր բլուրի պեղումներից, իրենց կրկնություններն ունեն Արարատյան դաշտավայրի բաղմաթիվ հուշարձանների խեցեղենի վրա (Արգիշտիխինիլի, Էրեբունիի, Ցշականի, Արաղածի)։ Միևնույն ժամանակ այս անոթների լայն զուգահեռները հանդիպում են ոչ միայն Աղա երկրի, այլև ողջ Վանի թագավորության հանրահայտ հուշարձանների գտածոներում (Տուշպա, Հայկաբերդ, Բաստամ, Կալայիդերե, Ալթըն-թեփե)։

КАРАСЫ, НАЙДЕННЫЕ ИЗ ПАМЯТНИКОВ АРАРАТСКОЙ ДОЛИНЫ VIII—VII вв. ДО Н. Э.

Г. Г. АВЕТИСЯН

Резюме

Среди изделий керамического производства, выявленных из памятников Араратской долины—Эребуни, Аргиштихинили, Кармир блура, Ошакапа, Арагаца—есть множество крупных сосудов-карасов, которые морфологически делятся на пять типов, а типы—на несколько вариантов. Орнаментальные мотивы этих сосудов весьма своеобразны. Декоры оформлений имеют жгутовидные, треугольные, рельефные и вдавленные элементы, а также процарапанный орнамент. Эти карасы предназначены как для хранения земледельческих и скотоводческих продуктов, так и для их переработки. Иногда они использовались в качестве погребальных сосудов. Эти сосуды имеют свои аналогии в биайнийских памятниках Западной Армении—Ване, Айкаберде, Патноце, Алтын тепе, Каялидере и других, датируемых VIII—VII вв. до н. э. Близость форм, а также повторение орнаментальных мотивов, совпадение знаков и клейма на них подтверждают, что они имели стандартное производство во всем Ванском царстве.

---

35 Б. Б. Пиотровский, Ванское царство, с. 193.